

336.3

Ե-88

Դ. Ա. ՍՏԵՊԱՆՈՎ

ԽՆԱՅՈՂ ՏՆՏԵՍ ՅԵՂԻՌ

ԳՄԻՐ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ

ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԸ

ՆՐԱՆՔ ՄԵԺ ՈԳՈՒՏ ԵՆ ԲԵՐՈՒՄ

1928

ՅԵՐԵՎԱՆ



06 AUG 2013

28052

17 FEB 2010

336.3

U-88

ՏԱՆՅ ՓՈՂ ՄԻ ՊԱՀԻ

Գյուղացին հազար տեսակ կարիքներ ունի:
Մեկ տեսար՝ հարկավոր ե խրճիթը նորոգել,
կամ թե ձին փոխել, կով առնել, մեկ ել տեսար
հարկավոր ե սերմացան կամ քամհար մեքենա
զնել, կամ թե սերմացու առնել, հարկ վճարել,
անսառներն ապահովագրել և այլն: Այնքան
կարիքներ կան, վճր բոլորը դժվար ե հիշել
մեկ-մեկ: Այդ բոլորը, իհարկե, փող և պա-
հանջում և շատ անդամ՝ բավական մեծ գու-
մարներ: Բայց քիչ կը գտնվեն այնպիսի գյու-
ղացիներ, վորոնք պետք յեղած ժամանակ կա-
րողանան առանց այս ու այն կողմն ընկնելու
հենց տեղն ու տեղը մի յերկու-յերեք հարյուր
սուրի հանեն ու գնեն սեղանի վրա: Այդպիսի
գյուղացիների թիվը շատ չէ: Մեծ մասամբ
գյուղացին ստիպված ե լինում տարիներով,
ինչպես ասում են, փող հետ քցել, շահանոց-
ներով և արասանոցներով կամաց-կամաց խնա-
յոզություն անելով: Շատ անդամ այնպես և
լինում, վոր նա ստիպված ե լինում մի վորեն
անհրաժեշտ խոշոր բան ձեռք բերելու համար
յերկար տարիների ընթացքում կոպեկ-կոպեկ

ՀԱՅՈՒԼԻԳՐԱՖԻ I ՅԹԱՐԱ
ԹԱՏ. 1870 ԳՐԱՌ. 577 Բ.
ՏԵՐԱԺ 6000

խնայողություն անել: Արինակ, կը տանի մի
բայլ փայտ կը ծախի, կամ մի քանի փութ
կարողիլ և կամ թե ցորեն, գարի և հետո
ստացած փողից մի բան հետ կը քցի մինչև վոր
այնքան հավաքվի, վոր կարողանա իր ուզած
բանն առնել:

Այս բոլորն, իհարկե, շատ լավ ե: Ամեն
բան չափող-ձևող և խելքը գլխին մարդ լինելն
ու իր տնտեսությունը լավացնելու մասին ջր-
տափող լինելը այնպիսի մի բան ե, վոր աօման:
գյուղացի ել պետք ե այդպես անի: Մի բանն
ե միայն վատ և այդ ել այն ե, վոր իր բոլոր
խնայած գումարները, իր պահած ու հավա-
չած ամբողջ փողը գյուղացին հենց միշտ բե-
րում ե ու իր տանն ե պահում կամ թե չե՞ շա-
րունակ գրպանումն ե պահում: Այս հո բոլո-
րովն բանի նման չի: Հետ քցած, ազատ դու-
մարները տան մեջը պահել, կամ թե գրպանում
դրած շարունակ հետը մանածել—ամենաամմիտ
բանն ե: Ով ե իմանում ինչեր չի կարող պատա-
հել: Տուն ե մեկ ել տեսար կրակ ընկավ և վառ-
վեց գնաց և հետն ել ամբողջ գույքը, ունեց-
վածքը—և փողն ել հետը, այն փողը, վոր այդ-
պիսի դժվարությամբ, դառն քրտինքով հետ
ես քցել: Մենակ հո այդ չի: Կարող են և գողա-
նալ: Իսկ յեթե վերցնես ու այդ թուղթ փողերը
տանից հեռու մի տեղ փորես ու պահես, մի որ
ել մկները կարող են կրծել ու փչացնել: Դրա-
նով ել բանը չի վերջանում: Տան մեջ փող պա-
հելն անհարմար ե նաև նրանով, վոր յեթե փո-

զը միշտ ձեռքիդ տակ յեղավ, կարող ես մի որ
նեղն ընկած ժամանակ վերցնել ու ծախսել և
ծախսել վոչ թե այն նպատակի համար, վորի
համար հետ ես քցել, այլ բոլորովին ուրիշ:
Յեկ վերջապես, մեղքներս ինչ թաքցնենք,
մեկ-մեկ ել մարդ ուզում ե խմել, քեզ անել:
իսկ վոր խմելն սկսեցիր, ուրեմն ել մնաս բա-
րով ասա փողերիդ. այնպես կը հալվեն, վոր
չես ել խմանա, թե՝ ուր գնացին, ինչ յեղան:
Բայց ամենազլիսավորն այն ե, վոր քանի
այդ ազատ փողերը, այդ խնայած գումարնե-
րը տանը պահած են, թեկուզ յոթը կողպեքի
տակ,—դրանք գյուղացուն վո՛չ մի վորեւ ո-
գուու են բերում ու վո՛չ ել մի չահ:

ԱՄԵՆԱԼԱՎՆ Ե ԱՅԴ ԱԶԱՏ ՓՈՂԵՐԸ ՊԱՐՏՔՈՎ ՏԱԼ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ

Յեթե ուզում ենք, վոր գյուղացու այդ
խնայած գումարները, ազատ փողերը մի վոր-
եւ ոգուտ բերեն և գյուղացին ել միշտ ազա-
հով լինի, վոր իր փողերը չեն կորչի, ապա ա-
մենալավ միջոցն ե ժամանակավորապես այդ
փողերը պարտքով տալ պետությանը: Պետու-
թյունը հիմա ամեն տեղ խնայողական գանձ-
արկներ ե բաց արել: Այդ գանձարկղներում
գյուղացին վորոշ ոգուտ ստանալով, կարող ե
պահել տալ իր խնայած գումարները մինչև վոր
այդ փողերի կարիքը կը զգա:

Բացի այդ խնայողական գանձարկղներից,

պետությունը հիմա բաց է թողնում և այսպես
կոչված պետական փոխառություններ։ Այդ
փոխառությունների մասին գյուղացիներից
շատերն են լսել։ Շատերը նրանցից ունեն և այդ
փոխառությունների տոմսերից (որլիգացիա-
ներից)։ Քիչ չեն և այնպիսի գյուղացիները,
վորոնք իրանց այդ տոմսերով մեծ գումարներ
են շահել։ Այնպես վոր այդ տոմսերը դնելով
նույնպես գյուղացու համար շատ շահավետ և
հարմար ե պահ տալ իր ինայած գումարները։
Յերբ վոր պետությունը փոխառություն է բաց
թողնում, նա վերցնում է ազգաբնակչությու-
նից-բանվորներից, գյուղացիներից՝ նրանց
մոտ յեղած ազատ փողերը վորպես պարտք,
ինչպես առում են՝ փոխարինաբար։ Թե ինչու
յե պետությունն այսպես անում, զրա մասին
հետո կը խոսենք։ Այստեղ այնքանը միայն կա-
րող ենք ասել, վոր այն գյուղացին, վորն իր
ինայողությունները պահում ե պետական փո-
խառությունների միջոցով, յերեք չե վնասվի
և կորուստ չի ունենա։ Այդ գործը՝ շա-
հավետ գործ ե։ Յեզ հենց զրա համար ել հենց
վոր մի ավելորդ հնագանց կը լինի տանը, այդ-
պիսին փոխանակ տանը պահելու առանց վոր-
են ոգտակար և շահավետ գործադրության, —
շատ ավելի լավ կը լինի խոկույն և յեթ տալ
և դնել պետական փոխառության մեկ հատ
տոմս (որլիգացիա)։ Որլիգացիա խոսքը ուսա-
բազդի խոսք ե։ Այդ—առանձնահատուկ մի
թուղթ ե, ինչպես, որինակ մուրհակը (վեր-

սիլ), վոր պետությունը տալիս և գյուղացուն
կոմ բանվորին՝ նրանցից փոխարինաբար,
պարտքով փող վերցնելիս։

Կամաց-կամաց որլիգացիաներ տանելով,
գյուղացին ժամանակի ընթացքում կարող ե
բավական խոչոր մի գումար խնայել, վորը և
կարող ե ծախսել իր տնտեսության ամենահիմ-
նական կարիքների վրա։

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԵՐՓԻՆ ՓՈՂԸ ԶԻ ԿՈՐՉԻ

Պետությանը պարտք տված կոմ թե՛ պե-
տական փոխառության որլիգացիաների հա-
մար վճարած փողերը յերեք չեն կորչի։ Պե-
տությունն այդ փողերը կը վերադարձնի յու-
ղացուն իր վորոց և ծափվ սահմանված ժամա-
նակին։ Այդ փողերի ապահովության համար
պետությունը յերաշխավորում է խորհրդային
յերկրի ամբողջ գույքով և ունեցվածքով։

Պետությանը պարտք տված փողերը, բա-
ցի անկորուստ և անվտանգ մնալը, շատ ուրիշ
ոգուտներ ել են բերում գյուղացուն։ Ամենից
առաջ այն, վոր այդ փողերն ինքնաբերաբար
աճելու յեն, որլիգացիաները յեկամուտ են տա-
լու, տոկոս են բերելու։ Բացի գրանից, որլի-
գացիան կարող ե խոչոր գումար շահել։ Հետո.
այդ որլիգացիաներով, ինչպես փողերով, կա-
րելի յե վճարել և գյուղատնտեսական հարկը,
և ապահովագրական մուծումները (վճարում-
ները)։ Կան և ուրիշ ոգուտներ, բայց գրանց

ժամին ավելի մանրամասնորեն մենք կը խոսենք
հետո:

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴ ՓՈՂԵՐԸ

Խորհրդային կառավարությունը մտահոգ-
ված է, վոր բոլոր աշխատավորների, բանվոր-
ների և գյուղացիների կյանքը քանի գնա՝ ա-
վելի և ավելի բարեկարգվի: Խորհրդային կա-
ռավարությունն աշխատում է, բավարարել ազ-
գարնակչության բոլոր նյութական և կուլ-
տուրական պահանջները: Իսկ այդ պահանջնե-
րին ավելի հաջող կերպով բավարարություն
տալու համար նա կառուցում է նոր ֆարբիկա-
ներ և գործարաններ: Բայց պարզ է, վոր այդ
նոր գործարանների և ֆարբիկանների կառու-
ցելը մեծ գումարներ ե պահանջում: Կա և մի
ուրիշ հանգամանք. շուկայում ապրանքների
քանակությունն այն ժամանակ միայն կարող ե
աճել և ավելանալ, յերբ նոր ֆարբիկան կամ
գործարանը արդեն կառուցած կը լինեն և յերբ
նրանք կը սկսեն աշխատել: Իսկ այդ գործա-
րանների կառուցման համար հիմա միջոցներ
են հարկավոր և շատ մեծ միջոցներ: Բացի
գործարաններ շինելը, ապրանքների քանակու-
թյունն ավելացնելու համար, հարկավոր է,
վոր մեր արդյունաբերությունը բավական չա-
փով գյուղատնտեսական հում նյութեր ստա-
նա: Արդյունաբերության աշխատանքը սերտ
կերպով կապված է գյուղատնտեսության աշ-

խատանքներին: Վորքան ավելի կայուն և հաս-
տատուն կը լինի գյուղատնտեսությունը, այն-
քան ավելի շատ կը լինեն և գյուղատնտեսական
հում նյութերը (բուրդը, բամբակը, ճակնդե-
ղը, կարտոֆիլը և այլն) և ուրեմն՝ այնքան
ավելի շատ ապրանքներ կարող ե արտադրել
մեր ագրունաբերությունը:

Խորհրդային կառավարությունը ներկայումս
շատ բան է անում գյուղացու և նրա տնտեսու-
թյան համար: Այսոր արդեն գյուղն սկսել է
ավելի լավ ապրել, գյուղացին ավելի կուշտ է
դարձել, նրա յեկամուտներն աճում են: Բայց
այդ ռես շատ քիչ է: Գյուղացիական տնտեսու-
թյունը վերջին հաշվով հետ է մնում քաղաքա-
յին արդյունաբերության աճումից: Մինչդեռ՝
առանց գյուղացու տնտեսության զարգացման
վոչ մի գեպքում հնարավոր չի լինի զարգացնել
նաև ամբողջ ժողովրդական տնտեսությունը:
Այդ պատճառով ել այժմ կառավարությունը
շատ մեծ հոգսեր ե տանում գյուղացու տնտե-
սության և ընդհանրապես մեր գյուղատնտեսու-
թյան մասին: Մեր կառավարությունն այնպես
է կարծում, վոր չի կարելի տաել, թե այդքանն
արդեն լավ է ու բավական է, յեթե մեր գյու-
ղացին մեկ դեսյատին հողից 40-50 փութ բերք
է ստանում, յերբ վոր ոտար պետություննե-
րում նույն մեկ դեսյատինից (որավարից) ըս-
տանում են մինչև 150-180 փութ հացի բերք:
Ի հարկե, վոչոք չի ասում, թե վոր ուղենանք
մենք իսկույն և յեթ կարող ենք հասնել արտա-

սահմանի պետություններին։ Բայց կամաց-
կամաց, աստիճանաբար, չարկավ, և՝ կարող
ենք հասնել և պետք է հասնենք։

Կառավարության առաջին հոգան եւ—բարձ-
րացնել գյուղացիական դաշտերի բերրիու-
թյունը։ Դրա համար կառավարությունը մի
շարք միջոցներ ե ձեռք առնում չորության ա-
ռաջն առնելու համար, տարածում ե տեսակա-
վոր, լավորակ սերմացուներ և հանքային պա-
րարտանյութեր։ Խոչը գումարներ են հատ-
կացվում Միջին Ասիայում վոստիչ սիստեմ
կառուցանելու համար։ Հողային մարմինները
գյուղանտեսական մեծ ազնություն են հասցը-
նում գյուղացիությանը։ Հողաշինարարու-
թյունն են կատարում, ընչանաներին ձիաներ և
յեղներ են մատակարարում և այլն։ Զարգանում
ե պետական ոժանդակությունը այլ և այլ գաղ-
թականներին։ Միջոցներ են ձեռք առնվում
ցանքսային տարածություններն ընդարձակե-
լու համար, վորպեսզի տարածվեն նաև տեխնի-
կական կուլտուրաները (կտորաբար, արեածա-
զիկը, բամբակը և այլն)։ Կառավարությունը
հոգ ե տանում նաև գյուղանտեսական մեքե-
նաների և գործիքների տարածման մասին, ա-
պառիկ ե տալիս նրանց այդ մեքենաները։ Հոգ
ե տանում կառավարությունը նաև գյուղա-
ցիական անասնապահության մասին, զուգա-
րաններ ե հիմնում և այլն։ Մի խոսքավ, կտ-
որավարության հոգաները տարածվում են գյու-
ղացու տնտեսության բոլոր կողմերի վրա։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՓՈՂԵ ՀԱՐԿԱՎՈՐ

Այս բոլոր գործերը կատարելու համար
խորհրդային կառավարությանը փողեր են
հարկավոր։ Կառավարությունը փող ե ստա-
նում հարկեր զանձելով ինչպես քաղաքային,
այնպես ել գյուղական ազգաբնակչությունից,
յեկամուտներ ստանալով արդյունաբերությու-
նից, փոխագրությունից, (արանսպորտ) և
այլ պետական ձեռնարկություններից և գույ-
քերից։ Սակայն, այդ միջոցները գեռ բավա-
կան չեն։ Դրա համար ել պետությունը փո-
խառություններ ե բաց թողնում։ Այդ փոխա-
ռություններով բնակչությունը կամովին փող
ե տալիս իր կառավարությանն ընդհանուր
գործի հաջողության համար։

Խորհրդային կառավարությունն արդեն
բաց ե թողել այդպիսի մի քանի փոխառու-
թյուն։ Այդ փոխառություններից մի քանիսը
բաց ելին թողված գլուխորապես քաղաքային
և բանվոր ազգաբնակչության համար, իսկ մի
քանիսն ել հատկապես գյուղացիության հա-
մար։ Գյուղացիական փոխառություններն այլ
և ուրիշ փոխառություններից տարբերվում են
նրանով, վոր այդ որվիդացիաներով կարելի յե
վճարել գյուղանտեսական հարկերը, ինչպես
նաև նրանով, վոր նրանց պարտատոմսերը
(ուրիշ խոսքով՝ որվիդացիաները) ավելի ե-
ժան են, քան թե մյուս փոխառություններինը

և այլն։ Այսպիսով, բաց թողած գյուղացիական փոխառությունների թիվը համառմ և ընդամենը հինգի։ Մի հինգ-վեց տարի սրանից առաջ բաց թողվեցին հացի յերկու փոխառություն, իսկ մի քանի տարի հետո՝ գյուղացիական փողային առաջին, յերկրորդ և յերրորդ շահումի փոխառությունները։

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս կառավարությունը մի նոր փոխառություն ել ե բաց թողել—գյուղացիական տնտեսության ամրացման փոխառությունը։ Այդ փոխառությունը մեծ ոգուտներ ե տալիս գյուղացիությանը, այլ և այնպիսի արտոնություններ, վորպիսիներն անցյալ գյուղացիական փոխառությունները նրան չելին տալիս։ Այս նոր փոխառությամբ հավաքված բոլոր փողերը ոգտագործվելու յեն բացառապես գյուղացիական տնտեսության ամրացման և նրա զարգացման գործի համար։ Ուրիշ խոսքով և ավելի պարզ ասած՝ այդ փողերն ոգտագործվելու յեն հետեւյալ գործերի համար։

1. Հորության դեմ կոիվ մղելու միջոցների,

2. Լավորակ սերմացուներ գնելու և եժանացրած գներով գյուղացիությանը ծախելու,

3. Հանքային պարարտանյութեր ձեռք բերելու և ինքնարժեքից ցածր գներով գյուղացիներին ծախելու,

4. Գյուղատնտեսական կոռպերացիայի միջոցներն ուժեղացնելու համար, ինչ չափով, վորայդ կոռպերացիայի նպատակն ե գյուղացիներին փոխառություններ տալը,

5. Գյուղատնտեսական մեքենաների միշարք նոր գործարաններ կառուցելու վրա (Ստալինգրադի տրակտորային գործարանը, գյուղատնտեսական մեքենաների Ռոստովի գործարանը, հնձող մեքենաների Զլատոռուտինսկի գործարանը և մի շարք ուրիշ գործարանները),

6. Պաղթական գյուղացիներին ողնելու հետ կազմած ծախսերը հոգալու և

7. Միջին Ասիայում և Անդրկովկասում վառուղիչ սիստեմներ կառուցանելու համար։

Ի՞նչ եք կարծում ապա՝ այս բոլոր ձեռնարկումներն ոգտակար և շահավետ չե՞ն կարող լինել մեր գյուղացիական տնտեսության համար։ Անտարակույս ե, վոր և՛ ոգտակար կը լինեն և չափազանց անհրաժեշտ։ Հետևաբար ամեն մի գյուղացի պետք ե ոգնության գա այս կարեռը գործին։

ՏԱԱ ՏՈԿՈՍԸ – ՍԵՓԱԿԱՆ ԳԱՎԱՐԱԿԻՆ

Այս բոլորից զատ՝ յուրաքանչյուր գավառակում փոխառության հախված ոբլիգացիա-

ներից ստացված գումարի մեկ տասերորդական մասը հատկացվելու յէ տեղական կարիքներին։ Ընդհանուր առմամբ ամբողջ փոխառության գումարի համեմատությամբ այդ կազմելու յէ նրա մեկ տասներորդ մասը, այսինքն՝ 10 մերլոն սուբլի։ Այդ 10 միլիոնն ահա հատկացվելու յեն տեղական տնտեսական և կուլտուրական կարիքներին, ինչպես, որինակ՝ դպրոցական, հիվանդանոցային և ճանապարհների շինարարության գործին, այլ և հացահատիկի պահեստներ շինելու և վերանորոգելու, ջրաղացներ և հացահատիկ զտելու կայաններ կառուցանելու համար, մեքենաներ ձեռք բերելու կամ՝ ազնվացեղ անսառւներ, թռչուններ, լավորակ սերմացու առնելու, բացի այդ՝ հողի վորակը բարձրացնելու, հողաշինարարությունը (տեղական սահմաններում) կարգավորելու և հազար ու մեկ այլ տշիստանքների համար։

Ինչքան ավելի պարտատոմսեր (որպիտացիաներ) կը գնեն տվյալ գավառակի գյուղացիները, այնքան ավելի գումար կը ստանա նրանց գավառակը կամ ըլջանը տեղական կարիքները հողալու համար։ Յեթև, ասենք, ուրիշների համար, այսինչ գավառակում կամ ըլջանում մեկ հազար ոսուրլու պարտատոմս կը ծախվի, ուրեմն՝ այդ գավառակը հատկապես իր տեղական կարիքների համար կը ստանա այդ գումարի տառապարի տաս տոկոսը, այսինքն՝ հարյուր ոսուրլի, յեթև պարտատոմսերը ժամակեցին

յերկու հազար ոսուրլու չափով, ուրեմն՝ գավառակը կը ստանա յերկու հարյուր ոսուրլի և այլն։ Այսպես դուրս ե գալիս, վոր յուրագանչյուր գյուղացին, պարտատոմսը գնելով, նախ և առաջ իր համար չահավետ գործ է կատարում, յերկրորդ՝ ողնում և պետությանը, վոր նա ամրացնի գյուղացիական տընտեսությունը և ապա վերջապես՝ ուժեղացնում է իր սեփական գավառակի կամ շրջանի նյութական միջոցները։

ՊԱՐՏԱՏՈՄՍՆ ԱՐԺԻ 10 Ռ., ԻՍԿ ՆՐԱ ՄԵԿ ՔԱՌՈՐԴԸ - 2 Ռ. 50 ԿՈՊ.

Նոր փոխառությունը բաց և թողված 100 միլիոն սուբլի ընդհանուր գումարով։ Այդ գումարը բաժանված է 40 մասի, կամ, այսպես կոչված սերիաների, այնպես վոր ամեն մեկ սերիան պարունակում է յերկու և կես միլիոն սուբլի գումար։ Յուրաքանչյուր սերիան իր հերթին բաժանվում է յերկու հարյուր և հինգուն հազար (250.000) պարտատոմսի, այնպես վոր ամեն մեկ պարտատոմսն արժի 10 սուբլի ($2.500.000 : 250.000 = 10$ սուբլի)։ Բայց վորպեսզի չքավոր գյուղացու համար գժվար չիինի այդ փոխառության պարտատոմսերից գնելը, առա սուբլիանոց պարտատոմսերի մի վորոշ մասը բաժանված է չորս հավասար մասի։ Պարտատոմսի այդպիսի մեկ քառորդը, այսինքն՝ նրա մեկ չորրորդական մասը կարելի

յե ձեռք բերել և առանձնապես, ստիպված չլինելով անպայման մյուս յերեք քառորդն ել գնելու: Այդպիսի մեկ քառորդ որվիգացիան (պարտատոմսը) արժի 2 ռ. 50 կոպեկ: Զեռք բերելով լրիվ պարտատոմսի այդպիսի մեկ քառորդը, գյուղացին կը ստանա նաև մեկ քառորդը թե՛ այն տոկոսների, վորոնք գալիս են մեկ հատ լրիվ տասսուրվիանոց պարտատոմսի վրա, և՛ թե մեկ քառորդն այն շահումի (շահած գումարի—վիզրիչի), վորն ընկնելու յե այդ սերիայի և այդ №-ի լրիվ որվիգացիային:


Հարյուր միլիոն ոռուբլու այն բնդհանուր դումարը, վորի չափով բաց ե թողված այս նոր փոխառությունն, այնքան ել մեծ գումար չե: Մեր Խորհրդացին յերկրում մոտ 24 միլիոն գյուղացիական ծուխ կա: Անպես վոր յեթե ամեն մի ծուխը առնելու լնի հենց միմիայն կես-կես որվիգացիա և պետությանը պարտք տա միայն 5-ական ոռուբլի, մենք լրիվ կերպով կարող ենք գլուխ բերել մեր այդ ամբողջ հարյուր միլիոնանոց փոխառությունը:

1927 թվի վերջերին պետությունը բաց թողեց այսպես կոչված ինդուստրացման փոխառությունը 200 միլիոն ոռուբլու գումարով: Այդ փոխառության պարտատոմսերը ծախվում եյին գլխավորապես քաղաքներում և գործարաններում: Յեկամագիստրում 2 ամսվա ընթացքում բանվորական և քաղաքային աղգարնակչությունը այդ փոխառությամբ տվին մեր պետությանը նույնիսկ ավելի, քան պատ-

հանջում եր, ուստի 225 միլիոն ռուբլի: Գյուղը նույնպես հետ չպիտի մնա: Այդ 100 միլիոնը նա պետք է հավաքի, վորովհետեւ այդ նրա ուժերից վեր չե:

ԲԱՅՑԻ ԻՆՉ ՅԵԿԱՄՈՒՏ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՈԲԼԻԳԱՑԻԱՆԵՐԸ

Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության պարտատոմսերով պետությունը տոկոսներ և վճարում—մեկ ռուբլուն տարեկան 6 կոպեկ: Ուրեմն մեկ լրիվ տասսուրվիանոց պարտատոմսը տարեկան 60 կոպեկ չահ և բերում, այդ պարտատոմսի մեկ քառորդ մասը—15 կոպեկ: Յերեք տարվա ընթացքում ամեն մեկ տասսուրվիանոց պարտատոմսը կը տա մեկ ռուբլի 80 կոպեկ յեկամուտ և բացի այդ՝ պարտատոմսը գնելու վրա ծախսված գումարն ել պետությունը հետ կը տա գյուղացուն: Անպես վոր 3 աարուց հետո այն գյուղացին, վոր պարտատոմսը գնելիս վճարել և 10 ռուբլի, հետ կը ստանա արդեն 11 ռ. 80 կոպեկ: Տոկոսների վճարելու կարգն ել այսպես և: Ամեն մի որվիգացիան (պարտատոմսը) ունի իր հատուկ կարունները: Տարին մեկ անդամ, փետրվարի 1-ին, գյուղացին պետք և կտրի կուպոններից մեկը և այդպիսին փոխանակի փողով ֆինբաժնում, բանկում, փոստում կամ հենց վորեւ ինայողական գանձարկում: Այդ կուպոններն իրանց ուժը պահպանում են մինչև 1941 թվի փետրվարի 1-ը: Յեթե գյու-



ղացին այդ ժամկետն անցկացրեց և ժամանակին իր հասանելիք տոկոսները չստացավ, ապա հետո ել նա չի կարող փողն ստանալ:

ՅՈ ՊԱՐՏԱՏՈՄՍԻՑ ՄԵԿՆ ԱՆԴԱՅՄԱՆ ՓՈՂ Ե ՇԱՀՈՒՄ

Բացի այդ տոկոսներից, գյուղացին իր ունեցած պարտատոմսերով կարող է փող շահել (վեգրիչ տանել): Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառության այդ շահումների համար պետությունը հատկացնում է գյուղացուց պարագ վերցրած ամեն մի ոռորուն տարեկան յոթ կոպեկ: Իսկ ընդամենը 3 տարվա ընթացքում այդ շահումներին պետությունը հատկացնում է 21 միլիոն ռուբլի: 3 տարվա ընթացքում տեղի յե ունենալու 6 վեճակահանություն (տիբաժ), այսինքն՝ տարին յերկու անգամ—Հունվարին և Հոկտեմբերին: Առաջին վիճակահանությունը լինելու յե 1928 թվի հոկտեմբերին: Ամեն մի վիճակահանության ժամանակ յուրաքանչյուր սերիայից խաղարկության եղբարելու թվով 1386 շահում*) (վեգրիչ) 87·500 ռ. ընդհանուր գումարով, իսկ ամբողջ փոխառությամբ խաղարկության եղբարելու-

40 շահեստ ամեն մեկը 1000 ռ. գումարով,
200 շահեստ ամեն մեկը 500 ռ. գումարով,
12000 շահեստ ամեն մեկը 100 ռ. գումարով,
43200 շահեստ ամեն մեկը 50 ռ. գումարով,

*) Շահումն և շահեստ միհնուն իմաստը ունեն:

այսինքն՝ 55·440 շահեստ 3·500·000 ռուբլի դումարով: Իսկ յերեք տարվա ընթացքում ամբողջ փոխառության 6 անգամ կատարած խաղարկությամբ շահեստների թիվը կը հանեմ 332·640-ի՝ 21 միլիոն ընդհանուր գումարով:

Ամբողջ փոխառությունն ունի տաս միլիոն որլիգացիա: Հետեաբար՝ ամեն մի հիսուն որլիգացիայից մեկը միջին թվով անպայման պետք է փող շահի:

Յեթե վորեւ պարտատոմսին (որլիգացիային) շահեստ ե ընկնում, ապա այդ պարտատոմսը մարվում է և հետագա խաղարկություններին այլքս չի մասնակցում: Մարվելը, կամ թե շիջուցումն այն ե նշանակում, վոր շահեստի զոմարից զատ, պետությունը վերադարձնում է գյուղացուն լիովին այն գումարը, վոր նա վճարել եր պարտատոմսը գնելիս, այլի այն տոկոսները, վոր այդ վճարման որը նա ունի ստանալու պետությունից: Յեվ ապա՝ խաղարկությունից (տիբաժից): մեկ ամիս հետո գումարը շահում պարտատոմսն այլքս տոկոսներ չի ստանում:

ՇԱՀԵՍՏՆԵՐԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱՏԱՐՎԻ

Շահեստների (վեգրիչների) խաղարկությունն այնպես ե կատարվելու, վորպեսզի գյուղացիներն իրենք ել հնարավորություն

ունենան ստուգելու՝ ճիշտ և ուղիղ ե կատարվում արդյոք խաղարկությունը, թե՞ վոչ: Դյուլացիները հենց իրանք պետք ե մասնակցեն խաղարկության (այսինքն՝ տիրաժի) հանձնաժողովի մեջ, վորն և կատարում է այդ խաղարկությունը: Բացի այդ, շահեստների խաղարկությունները կատարվելու յեն վոչ թե մեկ, այլ շատ տեղերում: Մենք արդեն ասացինք վերեւում, վոր բաց թողնվող պարտառումների ամբողջ քանակությունը բաժանվելու յե քառասուն մասի (սերիաների): Իսկ վորով հետեւ յուրաքանչյուր սերիան ունենալու յե իր շահեստները, այդ պատճառով ամեն մի սերիան կարելի կը լինի խաղարկության դնել մեկը մյուսից առանձին և այն վայրերում, վորտեղ վոր այդ սերիան ծախված կը լինի:

Յեթե, որինակի համար, վորեւ մեկ նահանդը, կամ յերկու հարակից (իրար հարեւան նահանգները) յերկու և կես միլիոն ոռություն արժողությամբ ոբլիգացիաներ (պարտառմաներ) կը գնեն, այսինքն՝ մեկ ամբողջ սերիա, ապա՝ այդ սերիայի խաղարկությունը կը կատարվի հենց այդ նահանգում կամ՝ նահանգներում: Իսկ նահանգի սահմաններում խաղարկությունն անպայման քաղաքումը չե, վոր պետք ե կատարվի, այլ կարող ե տեղի ունենալ մի վորեւ մեծ գյուղում: Գյուլացիներն իրանք ել պիտի մասնակցեն խաղարկության հանձնաժողովի մեջ և իրանք ել պետք ե խաղարկությունը կատարեն:

ՇԱՀԵՍՏՆԵՐԸ ՎՈՐՏԵՂԻՑ ՊԵՏՔ Ե ՍՏԱՆԱԼ

Ինչպես վող շահած ոբլիգացիայի (պարտառումների) մարդումը, այնպես ել շահեստի (վիգրիշի) վճարումը կատարվում ե խաղարկությունից մեկ ամիս հետո: Յեթե ասենք, որինակ, խաղարկությունը կատարվել ե հոկտեմբերին, ապա, ուրեմն՝ շահեստ կարելի յե ստանալ սկսած նույն թվի նոյյեմբերի 1-ից մինչև 1941 թվականի փետրվարի 1-ը:

Մինչև 500 ոռություն հասնող շահեստները վճարվում են հենց տեղում՝ խնայողական գանձարկղից, վարկային ընկերությունից, ֆին-բաժնից, պետական կամ գյուղատնտեսական բանկի վորեւ տեղական բաժանմունքից: Իսկ 500 և ավելի ոռությանոց շահեստները կարելի յե ստանալ միմիայն Մոսկվայում՝ Պետական բանկի Վարչությունից: Բայց, իհարկե, դրա համար կարիք չկա, վոր մարդն ինքը վեր կենա և գնա Մոսկվա: Հարկավոր ե միայն հանձնել պարտառմանը խնայողական գանձարկղին կամ վարկային ընկերությանը, և նրանք արդեն ինչ վոր հարկավոր ե իրանք կանեն, շահեստը Մոսկվայից կը պահանջեն, կը ստանան և հետո կը հանձնեն վող շահող գյուղացուն:

ԿԱՄ ՓՈՂ ՅԵՎ ԿԱՄ ԹԵՇԲԵՆԱՆԵՐ

Յեթե վող շահող (շահեստ ձեռք բերով) գյուղացին կամենա, կարող ե վողի վոխարեն

և մեքենա ստանալ: իհարկե, յեթե փող լինի՝
դնելը գժվար բան չի: Յեթե, որինակ, գյու-
ղացին 1000 ոռւրի շահեց, ապա այդ գումա-
րով նա ձի ել կարող ե զնել, կով ել,
գյուղատնտեսական գործիքներ և շատ ու-
րիչ բաներ ել: Իսկ յեթե շահեց գեղջ-
կուհին, ապա կարող ե զնել իր համար կարի
մեքենա: Բայց գյուղացիական տնտեսության
ամրացման փոխառությամբ փող շահող գյու-
ղացին (այսինքն՝ նա, վորին շահեստ և ընկել)
ունի մի շարք այնպիսի առավելություններ և
արտոնություններ (իրավունքներ), վորոնցից
զուրկ են ուրիշ դնորդները: Այսպես, որինակ,
մենք գիտենք, վոր մեղանում մեքենաներ շատ
չկան, պակասությունը բավական մեծ է, և ու-
մեն մի ցանկացող, յեթե նույնիսկ փող ել ու-
նի՝ չի կարող յերբ վոր ուղեց ձեռք բերել իր
ուղած մեքենաներն ու գործիքները: Բայց,
որինակ, նա, ով վոր շահեստ և տարել՝ մե-
քենան անպայման կը ստանա: Նա կարող է
տեղական, պետական կամ կոոպերատիվ պա-
հանությաց առանց վորեև հերթի զնել իր ուղած
գյուղատնտեսական մեքենան, վորի կարիքը
վոր զգում է, այդ թվում նաև տրակտորը, վո-
րի համար նա պետք է այնքան փող մտցնի,
ինչքան վոր շահել է (թեկուզ հենց միայն 50
ոռւրի լինի նրա տարած շահեստը): Այդպի-
սի գեղքերում գյուղացին ստանում է չքավոր
և միջակ գյուղացիների համար որենքով սահ-
մանված բոլոր արտոնությունները, այսինքն՝

մեքենայի զնից նրա համար զեղչ են անում,
դինը պակասեցնում են և հնարավորություն
են տալիս, վոր նա վորոշ ժամանակի ընթաց-
քում մաս-մաս վճարի մեքենայի արժեքը:

ՎՈ՞Ր ՄԻ ՀԱՐԿԻՑ ԶՊԻՏԻ ՎԱԽԵՆԱԼ

Գյուղացին լավ պետք է հիշի, վոր ինչ-
պես նրա ունեցած որևէ գյուղացիաները (պարաւ-
տոմսերը), այնպես ել նրանց վրա ընկած շա-
հեստները (վիզրիչները); ինչքան ել վոր խո-
չոր չլինին նրանք՝ վոչ մի հարկի կամ առուրքի
տակ չեն գրվում և նրանցից վոչ մի գանձում
չի կատարվում: Բայց շահեստներն ել առանց
ուշացներու և քաշքչելու, լրիվ չափով և ա-
ռանց վորեւ գումար պահելու տրվում են գյու-
ղացուն:

Միևնույն ժամանակ շատ հեշտ բան է և
իմանալը, թե արդյոք այս կամ այն պարաւ-
տոմսը խաղարկության ժամանակ մի վորեւ
գումար շահել է, թե չե: Այն պարաւտոմսերի
համարները, վորոնց վրա շահեստ ե ընկել, ան-
միջապես տղագրվում են գրեթե բայրը: Թեր-
թերում (լրագրեներում): Սակայն, բացի թեր-
թերից, շահած պարաւտոմսերի համարները
միշտ կարելի յե իմանալ նաև սեփական գյուղ-
խորհուրդում, գավառակային գործադիրը կո-
միտեյում, գոսակի բաժանմունքում, ամեն մի
ինայողական գանձարկում, խօճիթ-ընթեր-
ցաբանում, զբարդարանում և վարկային ընկե-
րության մեջ:

ԲԱՅՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ՊԱՐՏՔԸ ՅԵՐԻ Ե ՎՃԱՐԵԼՈՒ

Գյուղացիական տնտեսության ամրացման փոխառությունը բաց է թողված յերեք տարի ժամանակով՝ 1928 թվի փետրվարի 1-ից մինչև 1931 թվի փետրվարի 1-ը։ 1931 թվի փետրվարի 1-ից հետո պետությունն սկսելու յե գերազարձնել գյուղացուն նրանից պարտք վերցրած փողերը, այսինքն՝ ուրիշ խոսքով, — պետությունը հետ ե գնելու գյուղացուց նրա մոտ յեղած որլիգացիաները (պարտատոմսեր), վճարելով նրան այնքան, վորքան գյուղացին եր վճարել պարտատոմսը գնելու ժամանակ—10 ուրբլի մեկ լրիվ, ամբողջական պարտատոմսի համար և 2 ո. 50 կոպ։՝ պարտատոմսի մեկ քառորդ մասի համար։

Բայց յեթե այնպես պատահեց, վոր գյուղացուն այդ փողը ժամանակից առաջ պետք յեղավ, նա միշտ կարող ե այդպիսի դեպքում ծախել իր պարտատոմսը մեկ ուրիշ գյուղացուն և կամ թե՝ բանկին կամ խնայողական գանձարկղին։ Այդտեղ նրան կը վճարեն կանխիկ փողով և, ուրեմն, նա իր ուզած փողը ամեն ժամանակ կարող ե հետ ստանալ պետությունից առանց վորեե կորուստ ունենալու։ Բայց մի բան ել պետք ե ասել, վոր պարտատոմսերը ժամանակից առաջ ծախելն այնքան ել ձեռնտու գործ չե։ Ահա, տեսեք, որինակ, թե ինչպիսի մի հետաքրքիր վեպք եր նկարագրված լրագրներում մոտիկ ժամանակներս։

Գյուղացի Ալեքսանդր Դմիտրիկիչ Մակարովը, Բաբալնիցիկի գյուղից, վոր գտնվում է Ուրալսկի շրջանի Տրոիցիկի գավառում, գեռ ևս 1924 թվին, հինգ ուսուրիվ վճարելով, գնել եր պետական 6%-անոց առաջին փոխառության մեկ պարտատոմսը։ Այդ պարտատոմսի համարն եր 0·574·745, սերիան-02։ Մի քանի ամիս պարտատոմսն իր գրապանում պահելուց հետո, Մակարովը նույն թվին վերցնում ե և իր այդ պարտատոմսը ինչ վոր մի մարդու ծախում։ Ծախելը, ճիշտ ե, ծախում ե, բայց և այնպես շարունակ լրագրներում հետեւում ե, վոր տեսնի, թե վերջն ինչ ե լինելու, այդ պարտատոմսը մի բան շահելու յե, թե չե։ Յեվահա, յերեք տարի հետո, 1927 թվի հունվարին, այդ փոխառության իններրորդ խաղարկության ժամանակ, հենց ճիշտ այդ որլիգացիայի (պարտատոմսի) վրա յե ընկնում 25·000 ուռելու շահեստը։ Հասկանում եք, ելի, Մակարովի գրությունը, նոր ե նա խելքի գալիս, նստում ե ու մի նամակ ե գրում Մոսկվա—

Փինանսների ժողովրդական կոմիսարիատին։ Թե, իբր, այսպես ու այսպես,—չե՞մ կաբոդ արդյոք յես հիմա այդ պարտատոմսով ստանալ նրա վրա ընկած շահեստը։ Վկաներ ել ունիմ, վոր այսինչ համարով պարտատոմսն իմ ձեռքին ե յեղել։ Բայց Մոսկվայից պատախան ե գալիս, վոր շահեստը կարող ե ստանալ միայն նա, ում ձեռքին վոր այդ պարտատոմսը հիմա յե գտնվում։ Ուրեմն՝ վոր ծա-

խել ես՝ գնա ու ել վոչոքի մի մեղադրի։ Ո՞վ
ե մեղավոր, վոր շտապ-շտապ աշխատել ես
պարտատոմսն, ինչպես ասում եմ, «սաղաց-
նել»։

Բայց յեթե գյուղացին իր պարտատոմսը
ծախել չի կամբնում, նա կարող է այդպիսին
գրավ զնել Պետական բանկում և կամ ինքնու-
րույն խնայողական գանձարկղներում և դրա-
դիմաց ստանալ փողային փոխատվություն։
Յեվ, ահա, յեթե այդպես գրավ դրված պար-
տատոմսի վրա շահեստ ընկնի և դրավի ժամա-
նակն ել անցած չլինի, ապա՝ այդ շահեստը կր-
ստանա այն գյուղացին, վորին պատկանում և
գրավ դրած պարտատոմսը (որլիգացիան)։

Իդեալ՝ պետք ե տոել, վոր խնայողական
գանձարկղները գյուղացիներից այդ պարտա-
տոմսերն ընդունում են նաև պարզապես պա-
հելու համար։ Այդ բանը շատ հարմար և ձե-
ռնուու յենրանց համար, ովքեր չեն ուզում
պարտատոմսերը պահել իրանց աներում, վոր-
տեղնրանք կարող են կրոչել կամ վորանեղից կա-
րող են և գողացվել։ Յեվ այդպիսի գեափե-
րում, որլիգացիաները (պարտատոմսերը) պա-
հելու համար խնայողական գանձարկղը վոչ մի
կոպեկ վարձ չի վերցնում։

ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ԿԱՐԵԼ ՅԵ ՎՃԱՐԵԼ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԸ

Գյուղացիական տնաեսության ամբացման
փոխառության պարտատոմսերը ծախվում են
գյուղացու հենց ուղղակի քթի տակը։ բոլոր
սպառողական կոռպերատիվներում, գյուղա-
տնաեսական վարկային ընկերություններում,
գավառակային գործադիր կոմիտեներում,
գյուղխորհուրդներում, փոխադարձ ողնու-
թյան կոմիտեներում, խնայողական գանձար-

նելը նաև այն ե, վոր այդ պարտատոմսերով,
ինչպես փողերով, 1929 թվի հունիսի 1-ից հե-
տո կարելի յե վճարել գյուղատնտեսական
հարկը, այլ և կատարել կոպարավոր ապահո-
վագրության մուծումները (վճարումները)։

Հարկ վճարելու և կամ ապահովագրու-
թյան վճարում կատարելու համար այն պար-
տատոմսերը (ոբլիգացիաներն) ընդունվում են
պետության կողմից նրանց լիակատար արժո-
ղությամբ։ Այնպես վոր՝ յեթե գյուղացին
պետք է 10 սուբլի հարկ վճարի, ապա այդ
հարկը վճարելու համար նա կարող է տալ մեկ
շտա տասուութիւնոց պարտատոմս։

Բացի հարկեր կամ ապահովագրական վր-
ձարումներ կատարելը, գյուղացին կարող է
մտցնել իր այդ պարտատոմսերը նաև պետու-
կան հիմնարկությունները, վորպես գրավ վար-
ձակալության պայմաններով վերցրած հողա-
մասերի, անտառամասերի, ջրաղացների հա-
մար և այլն։

ՎՈՐՏԵՂ ԵՆ ՎԱԶԱՌՎՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ

Գյուղացիական տնաեսության ամբացման
փոխառության պարտատոմսերը ծախվում են
գյուղացու հենց ուղղակի քթի տակը։ բոլոր
սպառողական կոռպերատիվներում, գյուղա-
տնաեսական վարկային ընկերություններում,
գավառակային գործադիր կոմիտեներում,
գյուղխորհուրդներում, փոխադարձ ողնու-
թյան կոմիտեներում, խնայողական գանձար-

կղներում, վիստային բաժանմունքներում և
այն մասնավոր անձանց մոտ, վորոնք դրա հա-
մար հատուկ լիազորություն են ստանում գա-
վառակային-ըրջանային գործկոմի կողմից
(ինչպես, որինակ՝ ուսուցիչները, բժիշկները,
գյուղատնտեսները, խրճիթվարները և այլն):

ԼԻՆԵՇՔ ԳԻՏԱԿԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

Գյուղացիները գեռ ևս խոշոր խնայողու-
թյուններ և խոշոր ազատ գումարներ չունեն:
Սակայն, նույնիսկ մանր ու չնչին խնայողու-
թյունները, ամբողջ մեր յերկրից հատիկ- հա-
տիկ հավաքված մանեթանոցներն ու տասշահ-
անոցները իրար հետ միատեղ կարող են բազ-
մաթիվ միլիոններ դառնալ: Յեվ այդ իսկ պատ-
ճառով մենք պետք ենք իմաստակից քաղաքացի-
ներ լինենք: Մենք չպետք ենք աշխատենք ան-
պայման և առանց վորեվե շահավետ գործա-
դրության մեր գրպանում պահենք ամեն մի
ազատ ուուրլին, այլ պետք են անպատճառ տա-
նենք այդ փողերը կամ խնայողական գանձար-
կողը և կամ թե պետք են այդ փողերով պետա-
կան փոխառության պարտատոմսեր (որլիգա-
ցիաներ) գնենք: Դրանով մենք շատ մեծ ոգ-
նություն հասցրած կը լինենք մեր պետու-
թյանը:

Անցյալներում ցարական կառավարու-
թյունն ել եր փոխառություններ բաց թող-
նում: Այն ժամանակ փոխառությունները թը-

գով անհամեմատ ավելի շատ եյին, քան թե
չիմա մի տասնեհինդ, քսան անգամ ավել ե-
յին: Բայց այն ժամանակ փոխառությունները
բոլորովին ուրիշ տեսակ եյին: Որինակ, ա-
մենաեժան պարտատոմսն այն ժամանակ ար-
ժեր 100 ուուրլի: Իսկ ամենաթանգը—25 հա-
զար ուուրլի: Պարզ է, վոր վոչ մի գյուղացի
չեր կարող այն տարիներին գոնե մեկ հատ
պարտատոմս ձեռք բերել: Յեվ ի՞նչ եր գուրս
գալիս: Դուքս եր գալիս այն, վոր պարտա-
տոմսերն առնում և նրանցից շահվում եյին
միմիայն հարուստները: Յեվ այդ բոլոր պար-
տատոմսերը նրանք գնում և ձեռք եյին բերում
հենց այն փողերով, վոր հազար ու մեկ սուտ
ու խաբերայությամբ, գյուղացու արյունն ու
քրտինքը քամելով ու շահագործելով գուրս
եյին կորցում նրա և բանվորի գրպաններից:
Իսկ ի՞նչ բաների վրա յեր ծախում ցարա-
կան կառավարությունը փոխառությունների
միջոցով ստացած այդ հոկայական գումար-
ները:

Այդ բոլոր փողերի մեծագույն մասը գնաց
պատերազմական ծախսերի վրա, հենց այն
պատերազմների, վորոնց ժամանակ բոլորո-
վին իզուր սպանվեցին և խեղանդամվեցին մի-
լիոնավոր մեր բանվորներն ու գյուղացիները:

Բայց խորհրդային կառավարությունը
միանգամայն այլ կերպ և վարդում: Բանվոր-
ներից և գյուղացիներից փոխ առած ամեն մի
կոպեկը ծախսվում է միայն և միմիայն տնտե-

սական նոր շինարարության, նոր Փաբրիկաներ և գործարաններ կառուցելու և մեր գյուղատնտեսության զարգացման գործի վրա: Իսկ ինչ վերաբերում է պետության այլ կարիքներին, ինչպես, որինակ, պետական վարչական ապարատի ծախսերը, բանակ պահելը, սահմանների պահպանությունը, դպրոցների, հիվանդանոցների, այլ և այլ հաստատությունների պահպանության հետ կապված ծախսերը, տպա այս բոլորի համար պետությունը ծախսում և այն փողերը, վորոնք գանձարան ևն մտնում զանազան հարկերից, տուրքերից, պետական գույքերի և ձեռնարկությունների հասուլթներից և ուրիշ նմանորինակ յեկամուններից:

Իսկ վորովհետեւ անտեսական նոր շինարարությունը, նոր Փաբրիկաների և գործարանների կառուցումը և գյուղատնտեսության զարգացումը և այլն—կատարվում է պետության ձեռքով հոգուտ բանվորի և գյուղացու շահերի, ապա պարզ և, վոր իրանց հերթին բանվորն ու գյուղացին ել պիտի ոգնեն պետությանը, վորպեսզի նա կարողանա հաջողությամբ գլուխ բերել այն մեծ և համաժողովը դական գործը, վորը հանձնարարված է նրան բանվորների և գյուղացիների կողմից:

Միայն ընդհանուր ուժերով և իրար ձուլված յեռանդով և, վոր մենք կը կարողանանք հաջողությամբ լուծել այն բոլոր խնդիրները,

վոր դնում ե իր առջև մեր պետությունը և այն ել ամենակարծ ժամանակում:

Ուրեմն, համերաշխ և սերտ կերպով գործի անցնենք: Ամեն մի գյուղացի պետք ե գնի գյուղացիական տնտեսության ամրացման պետական չահեստի փոխառության պարտադրման:

Այդպես է պահանջում և՛ պետության չահը, և՛ իր չահը:

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ
ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ՝
«ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՇԱԶԵՍԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ
ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ուժեղացնելու համար պետության այն միջոցները, վորոնք ոգտագործվում են գյուղացիական տնտեսության ամրացման և զարգացման համար, ԽՍՀ Միության կենտրոնական ֆորձադիր կոմիտեն և ֆողովրդական կոմիսարների Խորհուրդը վորոշում են. —

1. Բայց թողնել պետական ներքին շահեստի փոխառություն հետեւյալ հիմունքներով:

2. ԽՍՀ Միության պետական փոխառությունների մատյանում այդ փոխառությունը տոմարագրվում է հետեւյալ անվամբ. — «Գյուղացիական տնտեսության ամրացման պետական ներքին շահեստի փոխառություն»:

3. Փոխառությունը բաց եւ թողվում հարյուր միլիոն ոռոբլի գումարով, բաժանվելով 40 սերիաների՝ յուրաքանչյուր յերկու և կես միլիոն ոռոբլու չափով և ներկայացնողի տասոռութիւնոց պարտատօմսերով:

4. Փոխառության պարտատօմսերը բաց են թողնվում ինչպես առանց բաժանվելու, այնպես եւ չորս հավասար մասերի բաժանվելով՝ յուրաքանչյուրը յերկու ոռոբլի հիսուն կոպեկի արժողությամբ: Պարտատօմսերի առանձին մասերը համարակալվում են միևնույն համարով, ինքնուրույն շրջանառության են դրվում և իրավունք են տալիս ստանալու պարտատօմսի վրա ընկած շահեստի մեկ քառորդ մասը և տոկոսային յեկամուտի մեկ քառորդ մասը:

5. Փոխառությունը բաց եւ թողվում 3 տարի ժամանակով՝ 1928 թվի փետրվարի 1-ից մինչև 1931 թվի փետրվարի 1-ը:

6. Փոխառության պարտատօմսերը բաց են թողվում ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից իրանց անվանական գնով: Բաց թողնելու կարգը և պայմանները սահմանվում են ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից:

7. Փոխառության պարտատօմսերը բերում են տարեկան վեց տոկոս: Տոկոների վճարումը կատարվում է կուպոններով՝ յուրաքանչյուր անցած տարվա համար՝ սկսած 1929 թվի փետրվարի 1-ից:

8. Փոխառության պարտատոմսերով կատարվում է շահեստի վեց խաղարկություն—1928 թվի հոկտեմբերին, 1929 և 1930 թվականների հունվարին և հոկտեմբերին և 1931 թվի հունվարին:

Շահեստների քանակն և գումարը յուրաքանչյուր խաղարկության մեջ սահմանվում է համաձայն հետեւյալ աղյուսակի:—

Համ փոխառութ. ամեն մի սերիալի

| Շահեստ. քանակը | Շահեստ. չափը | Շահեստների ընդ. գումարը |
|-------------------|-----------------|----------------------------|
| 1 | 1.000 | 1.000 |
| 5 | 500 | 2.500 |
| 300 | 100 | 30.000 |
| 1.080 | 50 | 54.000 |
| 1.386 | | 87.500 |

Համ փոխառութ. 40 սերիաների

| Շահեստ. քանակը | Շահեստ. չափը | Շահեստների ընդ. գումարը |
|-------------------|-----------------|----------------------------|
| 40 | 1.000 | 40.000 |
| 200 | 500 | 100.000 |
| 12.000 | 100 | 1.200.000 |
| 43.200 | 50 | 2.160.000 |
| 55.440 | | 3.500.000 |

Յուրաքանչյուր տիրաժի ժամանակ խաղարկության են յենթակա ամեն մի սերիայի

մեջ 1386 շահեստ՝ 87.500 ո. ընդհանուր գումարով, իսկ բոլոր 40 սերիաներում 55.440 շահեստ՝ «3.500.000 ո. ընդհանուր գումարով: Ընդամենը յերեք տարվա ընթացքում շահեստների 6 խաղարկության ժամանակ վիճակահանության են գրվում 332.640 շահեստ՝ քսան և մեկ միլիոն ոսւբլու ընդհանուր գումարով, այսինքն՝ միջին թվով փոխառության 30 պարտատոմսերից մեկը շահում է:

9. Այն պարտատոմսը, զորի վրա շահեստ և ընկել, շիջուցվում է և այլ ևս չի ժամանակցում շահեստների հետագա խաղարկություններին: Պարտատոմսը կրողին, շահեստից զատ (Հոդ. 8.), վճարվում է պարտատոմսի անվանական արժեքը և այն տոկոսներն ըստ կուպոնի, վոր գոյացել են մինչ այն որը, յերբ նշանակված և շահեստի վճարումը (Հոդ. 10):

10. Շահեստների, այլ և պարտատոմսերի անվանական արժեքի և նրանց տոկոսային յեկամուտի (Հոդ. 9) վճարումը՝ պարտատոմսերը տիրաժ անցնելու դեպքում, կատարվում է հունվարին տիրաժն անցած պարտատոմսերի ժաման փետրվարի 1-ից, և նոյեմբերի 1-ից այն պարտատոմսերի համար, վորոնք տիրաժ են անցել հոկտեմբերին: Նույն այդ ժամկետներին (փետրվարի և նոյեմբերի 1-ից դադարում և նաև տիրաժ անցած պարտատոմսերի տոկոսների աճումը):

11. Շահեստի խաղարկությունների կատարման կարգը սահմանվում է ԽՍՀ Միու-

թյան Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից այնպես, սակայն, վոր շահեստի խաղարկությունները կատարվեն բատ սերիաների և վոր խաղարկությանց վայրերը սահմանվեն համապատասխան այն շրջանների, վորտեղ ծախված են փոխառության առանձին սերիաները: Խաղարկության հանձնաժողովների մեջ են մտնում նաև գյուղացիների ներկայացուցիչները—փոխառության պարտատոմսեր կրողներից:

12. Շահեստների վճարման կարգը սահմանվում է ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից և պետք է ապահովի շահեստի անպայման և անվիճելի գաղտնիքը:

13. Շահողին իրավունք է վերապահվում հերթից դուրս բերել շահեստի գումարի չափով գյուղատնտեսական գործիքներ (բարդ և պարզ կալսիչ մեքենա, տրակտոր, թեղահար մեքենա, հնձան, ցանիչ մեքենա, զատիչ մեքենա, խոտհար մեքենա, դութան, ցաքան, ձիափոցիսեր և այլն) տեղական սկետական և կոռպերատիվ պահեստներում յեղածներից, կիրառելով նրանց վերաբերմամբ սահմանված արտոնություններն և վարկավորման կանոնները:

14. Յուրաքաչյուր շրջանում կամ գավառակում ծախված պարտատոմսերի ընդհանուր գումարի 10 տոկոսը պետք է հանձնվեն տվյալ շրջանային կամ գավառակային բյուջեին՝

տեղական գյուղատնտեսական և կուլտուրական կարիքները հոգալու համար, ինչպես, որինակ՝ դպրոցների, հիվանդանոցների և ճանապարհների, ջրաղացների և սերմնագոտիչ կայանների կառուցման և վերանորոգման, մեքենաների, ազնվացեղ անասունների, թռչունների և լավորակ սերմացուների համայնքեն ձեռք բերելու, զողի լավացման և տեղական նշանակություն ունեցող հողաշինարարության համար և այլն:

15. Սկսած 1931 թվի փետրվարի 1-ից կատարվում է շահեստի խաղարկություններով չշիջուցված պարտատոմսերի հետ գնելը: Հետ գնելու ժամանակ պարտատոմսը կրողին վճարվում էն պարտատոմսերի անվանական գինը և մինչև 1931 թ. փետրվարի 1-ը աճած տոկոսները: Հետ գնելու գործողությունը կատարելու կարգը սահմանվում է ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից:

16. Տիրաժն անցած պարտատոմսերի (հոդվ. 10) կամ հետ գնելու յենթակա պարտատոմսերի (հոդվ. 15) անվանական արժեքը, այլ և շահեստներն ու տոկոսային յեկամուտն ստանալու իրավունքը վերապահվում է պարտատոմսեր և կուպոններ կրողին մինչև 1941 թ. փետրվարի 1-ը: Հիշյալ ժամկետն անցնելուց հետո պարտատոմսեր և կուպոններ կրողները

կորցնում են համապատասխան դումարներն ստանալու բոլոր իրվունքները:

17. Սկսած՝ 1929 թվի հուլիսի 1-ից փոխառության պարտատոմսերն իրանց անվանական գնով ընդունվում են միասնական գյուղատնտեսական հարկի և պարտադիր կոպարավոր ապահովագրության վճարումների դիմաց, վորպես փողային հասուցում:

18. Փոխառության պարտատոմսերը, նըրանցից ստացված յեկամուտները, շահեստները և պարտատոմսերով կատարված գործարքները ազատվում են վորեե համապետական և տեղական նշանակություն ունեցող հարկերի տակ դրվելուց և նմանորինակ դանձումներից:

19. Փոխառության պարտատոմսերն ազատութեան կարող են վաճառվել և գրավ դրվել:

20. Փոխառության պարտատոմսերն ընդունվում են վորպես դրավական պետական կապալների և մատակարարությունների համար և ի ապահովություն ակցիզների և մաքսատուրքերի մասնատված վճարումները կատարելու՝ համաձայն ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից սահմանված կուրսի:

21. Պետական, այդ թվում նաև կոմունակույքերի (հողամասերի, անտառամասերի, արդյունաբերական ձեռնարկությունների և այլն) վարձակալներին իրավունք է վերապահվում փոխառության պարտատոմսերով կատարել իրանց այն մուծումները, վոր ներկայաց-

գում են ի ապահովություն վարձակալական պարմանագրերի՝ համաձայն ԽՍՀ Միության Փինանսների ժողովրդական կոմիսարիատի կողմից սահմանած կուրսի:

ԽՍՀ Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի նախագահ՝ Մ. ԿԱԼԻՆԻՆ,

ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների նորհրդի նախագահ՝ [REDACTED],

ԽՍՀ Միության կենտրոնական Գործադիր կոմիտեյի Քարտուղար՝ [REDACTED]:

Մոսկվա, կրեմ, 1927 թ. դեկտեմ. 30-ին:



«Ազգային գրադարան



NL0205635

28052